

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01**

ք. Երևան

19 ապրիլի 2019 թ.

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դե բեստ շին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Թադևոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված կոմիտեի վարչական շենքի տարածքի առաջին հարկի ընթացիկ նորոգման աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 6 ամիս:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ կուրսերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5

աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառու պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 15000000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուին իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ԼԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի - ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՆԸՆԵՐԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձևերի փոփոխության, որոնք փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձևերի փոփոխության, որոնք փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձևերի փոփոխության:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 28 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե  
ք. Երևան, Արշակունյաց 7  
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն

Հ/Հ 900013220026

Հ/Հ 02534328

Գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյան



**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ղը Բեաո Շին» ՍՊԸ  
Գ. Գոռավան Վ. Սարգսյան 49  
Հ/հ 2472401738040000  
«ԱրդՇինԲանկ» ԲԲԸ

Հ/Հ 04230433

Տնօրեն Ա. Թադևոսյան



**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇՎՎՈՒՄ**

**ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Գ/Գ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
<b>1-1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ</b>					
	<i>Քանդման աշխատանքներ - հիմնական և երկրորդական մուտք</i>				
1	Խարամաբետոնե սալիկներից պատերի քանդում $\delta=150$ մմ	մ <sup>2</sup>	67.72	0.70	64.81
2	Խարամաբետոնե սալիկներից պատերի քանդում $\delta=100$ մմ	մ <sup>2</sup>	53.20	0.70	50.91
3	Խարամաբետոնե բլոկներից պատերի քանդում $\delta=220$ մմ	մ <sup>3</sup>	2.3	6.94	21.73
4	Գիպսաստվարաթղթե պատերի քանդում $\delta=100$ մմ	մ <sup>2</sup>	13.50	0.38	6.93
5	Դռների ապամոնտաժում շեպերի քանդումով	մ <sup>2</sup>	24.67	1.02	34.24
6	Ներքին պատուհանների ապամոնտաժում շեպերի և պատուհանագոգերի քանդումով	մ <sup>2</sup>	16.25	1.72	37.99
7	Խողովակների երեսապատման քանդում $\delta=100$ մմ	մ <sup>2</sup>	6.15	0.38	3.16
8	Մանրահատակի քանդում	մ <sup>2</sup>	52.5	0.47	33.28
9	Լամինատե հատակի քանդում	մ <sup>2</sup>	150.0	0.12	24.93
10	Կեռամոզրանիտե սալերով հատակի քանդում	մ <sup>2</sup>	29.2	0.37	14.57
11	Լամինատե շրիշակի քանդում	մ	129.0	0.01	1.71
12	Փայտե շրիշակի քանդում	մ	51.3	0.01	0.68
13	Կեռամոզրանիտե շրիշակի քանդում	մ	20.1	0.01	0.27
14	Քարե շրիշակի քանդում	մ	1.3	0.01	0.02
15	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի քանդում $\delta=30$ մմ	մ <sup>2</sup>	79.7	0.37	39.62
16	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի քանդում $\delta=60$ մմ	մ <sup>2</sup>	68.6	0.66	61.20
17	Պատերի քերում	մ <sup>2</sup>	484.2	0.09	56.90
18	Սրբատաշ տու.ֆ պատի ապամոնտաժում $\delta=600$ մմ	մ <sup>2</sup>	6.2	2.33	19.67
19	Կախովի առաստաղի քանդում	մ <sup>2</sup>	168.5	0.05	12.54
20	Ասֆալտի քանդում $h=10$ սմ	մ <sup>3</sup>	0.43	3.49	2.04
21	Հիմքերի փորում	մ <sup>3</sup>	0.57	1.81	1.41
22	Բազալտե սալերով հատակի քերում մուտքերի խողանակների տեղադրման համար	մ <sup>2</sup>	1.84	0.41	1.03
23	Ճակատների քերում	մ <sup>2</sup>	560.0	0.09	65.81
24	Օդորակիչների արտաքին բլոկների քանդում, պահպանում	կ-տ	20.0	2.06	56.17
25	Անցակետի ապամոնտաժում, պահպանում, հետագա վերատեղադրման համար	հատ	1.0	20.00	27.24
26	Մետաղի դետեկտորի ապամոնտաժում	հատ	1.0	20.00	27.24
27	Շին.աղբի բարձում և տեղափոխում 12 կմ հեռ.վրա	մ <sup>3</sup>	40.0	5.46	297.65
	<b>Հարդարման աշխատանքներ</b>				<b>963.73</b>
1	Խարամաբետոնե բլոկներով պատերի շար $\delta=100$ մմ	մ <sup>2</sup>	256.9	2.91	1019.13
2	Խարամաբետոնե բլոկներով պատերի շար $\delta=220$ մմ	մ <sup>3</sup>	2.8	19.69	75.09
3	Միջնորմների ամրանավորում AI դասի ամրանով	տ	0.20	439.17	119.63
4	Խժուժ	կգ	25.0	1.42	48.18
5	Մետաղական տարրերի տեղադրում	տ	0.1	599.00	81.58
6	Պատերի սվաղում գաջի շաղախով	մ <sup>2</sup>	514.0	1.88	1315.04

<sup>1</sup> Ծավալ աթեթթ-ն ախահ աշի վ ը հր ապարակ վ ու մ է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:

7	Պատերի սվաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ <sup>2</sup>	1168.3	1.04	1647.52
8	Առաստաղի սվաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ <sup>2</sup>	116.3	1.14	180.76
9	Կախովի առաստաղի իրականացում գիպսաստվարաթղթից (հրակայուն, ջրակայուն) , մետաղական կարկասի վրա	մ <sup>2</sup>	242.2	2.81	928.37
	<i>Գիպսաստվարաթղթի մետաղական կարկաս և կարկասի ամրացման հարմարանքներ</i>				0.00
ա	Գիպսաստվարաթղթի պրոֆիլ CD(մ)	մ	775.1	0.19	199.18
բ	Գիպսաստվարաթղթի պրոֆիլ UD(մ)	մ	96.9	0.20	26.78
գ	Ուղիղ կախոց CD- ի համար	հատ	314.9	0.02	9.71
դ	Ինքնապտուտակ	հատ	4118	0.01	63.49
ե	Թղթյա ժապավեն կարաների համար	մ	411.8	0.03	19.05
զ	Ձգածոպան	հատ	314.9	0.06	24.28
է	Կցորդիչ CD-ի համար	հատ	145.3	0.02	4.48
ը	Երկմակարդակ կցորդիչ CD-ի համար	հատ	557	0.11	85.90
թ	Ինքնապտուտակ K6/25	հատ	194	0.01	2.99
10	Գիպսաստվարաթղթի ներկում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ <sup>2</sup>	242.2	1.59	523.48
11	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	մ <sup>2</sup>	121.13	1.15	190.16
12	Լամինատ հատակների իրականացում (շրիշակով և պարալոնի շերտով)	մ <sup>2</sup>	205.33	4.70	1315.33
13	Գրանիտ աստիճանների տեղադրում d=30մմ, մշակված եզրով 2.85*0.35-3հատ, 2.85*0.0.6-1 հատ	մ	11.4	14.96	232.34
14	Գրանիտ սալիկներով աստիճանատակ d=30մմ	մ <sup>2</sup>	2.1	32.69	93.50
15	Հատակների երեսապատում գրանիտ սալիկներով d=30մմ	մ <sup>2</sup>	20.5	32.69	912.71
16	Գրանիտ սալիկներով հատակների անցքերի լցում և մշակում	մ <sup>2</sup>	47.7	2.50	162.42
17	Խողովակների երեսապատում խարամաբետոնե բլոկներով ծ=100մմ	մ <sup>2</sup>	7.6	2.94	30.40
18	Գրանիտ պատուհանագոգեր	մ <sup>2</sup>	4.9	33.29	221.99
19	Գրանիտ շրիշակների կառուցում h=10սմ L=17.8մ	մ <sup>2</sup>	1.78	31.22	75.68
20	Տուֆ քարե շարվածք «միդիս» տիպի ծ=350մմ S= 8.6մ <sup>2</sup>	մ <sup>3</sup>	3.0	22.61	92.69
21	Տուֆի ջրամեկուսացում	մ <sup>2</sup>	8.6	1.71	19.98
22	Տուֆե գոգոռա	մ <sup>2</sup>	3.9	20.64	109.62
23	Տուֆե (վարդագույն) արտաքին պատուհանագոգեր 10սմ հաստության	մ <sup>2</sup>	1.2	20.64	33.73
24	Գոգոռայի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ <sup>2</sup>	4.08	1.23	6.82
25	Բազալտ 5սմ հաստության	մ <sup>2</sup>	4.10	23.99	133.99
26	Օղափոխիչ	հատ	1.0	51.26	69.82
27	Օղափոխության խողովակ	մ	5.0	4.69	31.92
28	Ճակատների ներկում ճակատային ներկով, ծեփամածկումով	մ <sup>2</sup>	560.0	0.93	709.76
29	Օդորակիչների արտաքին բլոկների վերատեղադրում	հատ	20	4.12	112.35
30	Ներքին փայտամածի կառուցում և քանդում	մ <sup>2</sup>	150.0	1.06	217.24
31	Հատակի խոզանակի տեղադրում	հատ	2	50.00	136.20
32	Անցակետի վերատեղադրում	հատ	1	20.00	27.24
33	Մետաղի դետեկտորի վերատեղադրում	հատ	1	20.00	27.24
34	Քարտային բանալի	հատ	1	50.00	68.10
	<b>Նոր իրականացվող բացվածքներ</b>				
1	Ճեղքերի իրականացում քարե պատերի մեջ	մ	4.00	0.51	2.76
2	Անցքերի շաղախում պատերի մեջ Ф14	հատ	10.00	0.22	2.97

3	Մետաղական տարրեր, տեղադրումով, բացվածքի իրականացման համար	տն	0.045	565.75	34.67
4	Փ12AII դասի ամրան, տեղադրումով	կգ	5.0	0.49	3.37
5	Մետաղական տարրերի փաթաթում մետաղական ցանցով 3Br-I (150x150) 0,78կգ - 1մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>	3.0	0.64	2.62
6	Ցեմ/ավազային սվաղի իրականացում 40մմ հաստության	մ <sup>2</sup>	3.0	2.43	9.93
7	Բետոնե հիմքերի կառուցում B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.60	42.68	34.88
8	Անցքերի շաղափում Փ200	հատ	1.0	0.22	0.30
9	Փ16A500C դասի ամրանի արժեքը	կգ	37.0	0.39	19.65
10	Փ14A500C դասի ամրանի արժեքը	կգ	7.0	0.39	3.72
11	Փ6Ac I դասի ամրանի արժեքը	կգ	5.0	0.48	3.28
<b>Պատուհաններ</b>					<b>11524.01</b>
1	Արտաքին պատուհանների տեղադրում, թափանցիկ ապակեփաթեթ, 4+4մմ, սպիտակ ալյումինե շրջանակով բարդ փականքով, ջերմակամուրջով, (արտերկիր)	մ <sup>2</sup>	3.0	62.50	255.38
2	Նույնը՝ չբացվող փեղկեր (արտերկիր)	մ <sup>2</sup>	4.9	37.06	247.33
<b>Դռներ</b>					<b>502.71</b>
1	Դուռ՝ թրծած ապակուց 10մմ, թաքնված փականով, ջերմակամուրջակով, լավորակ ծխնիով, բռնակով, հերմետիկ փակվող, երկկողմ բացվող (արտերկիր)	մ <sup>2</sup>	13.80	110.00	2067.52
2	Նույնը՝ չբացվող փեղկեր (արտերկիր)	մ <sup>2</sup>	19.2	37.06	971.15
3	Դուռ՝ կիսաթափանց ապակյա ներդիրով 1 տակ ապակի 4մմ, թաքնված փականով, ալյումինե շրջանակով, առանց ջերմակամուրջակ, առանց շեմ (արտերկիր)	մ <sup>2</sup>	21.50	38.22	1119.25
4	Նույնը՝ չբացվող փեղկեր (արտերկիր)	մ <sup>2</sup>	3.5	37.06	176.67
<b>Մետաղական թեքահարթակներ</b>					<b>4334.59</b>
1	Մետաղական թեքահարթակների ուղղանկյուն խողովակների մոնտաժում՝ առանց նյութի արժեքի	տ	0.22	56.27	16.86
2	Մետաղական խողովակի 50x40 արժեքը	մ	77.5	1.97	208.12
3	Մետաղական խողովակի 40x40 արժեքը	մ	8.7	1.57	18.64
4	Մետաղական խողովակի 40x80 արժեքը	մ	12.5	2.94	50.10
5	Ռեչինֆային թիթեղի տեղադրում	մ <sup>2</sup>	10.3	5.52	77.41
6	Դյուրեխ	հատ	10.0	0.57	7.71
<b>Մուտքի հովարներ</b>					<b>378.85</b>
1	Հովարի երեսապատում երկշերտ թրծած ապակիով 10սմ հաստության	մ <sup>2</sup>	14.6	19.88	395.33
2	Կոնստրուկցիա	հատ	6	25.00	204.30
3	Ապակու գլանաձև ամրակ	հատ	24.0	11.32	370.03
4	Պատի ամրակ	հատ	9.0	5.66	69.38
5	Ճոպանի ամրակ	հատ	9.0	9.34	114.44
6	Ամրակ	հատ	24.0	5.66	185.01
7	Ճոպան	մ	12.9	2.26	39.78
8	Անկյունակ	հատ	12.0	3.40	55.50
9	Հեղույս	հատ	48.0	1.13	74.01
10	Հորիզոնական ջրահեռացման խողովակ	մ	7.4	0.57	5.70
11	Ուղղահայաց ջրահեռացման խողովակ	մ	6.4	1.13	9.87
12	Անցքերի շաղափում Փ16 L=180	հատ	20.00	0.22	5.95
13	Չժանգոտվող թիթեղ	մ <sup>2</sup>	0.3	9.97	4.34
<b>Ընդամենը 1-1 մասի</b>					<b>1533.65</b>
<b>Ընդամենը՝ ըստ նախահաշվի</b>					<b>19237.53</b>

**1-2. Ջեռուցման համակարգ 1-2 առ.-ում ընկած հատվածում**

1	Այլումինե լավորակ ջեռուցման սարքեր տեղադրումով 0.129կՎտ H=0.5մ, ΔT=50 (61 սեկցիա)	էքմ	17.1	0.57	13.37
2	Այլումինե լավորակ մարտկոցների արժեքը	սեկցիա	61.0	4.49	373.09
3	Պոլիպրոպիլենե խողովակ այլումինե շերտով, տաք ջրի համար PN 20 Φ25 փորձարկումով	մ	35.0	2.27	108.01
4	Պոլիպրոպիլենե խողովակ այլումինե շերտով, տաք ջրի համար PN20 Φ20 փորձարկումով	մ	25.0	2.45	83.27
5	Ջեռուցիչների փական Φ15մմ, թերմոստատիկ գլխիկով	հատ	5	3.81	25.92
6	Ջեռուցիչների մոտ տեղադրվող կարգավորման փական Φ15մմ	հատ	5	3.78	25.71
7	Փական Φ20	հատ	3	3.78	15.43
8	Ջրի մաքրման ֆիլտր DN15	հատ	5	2.78	18.92
9	Կցորդիչով միացում առկա կանգնակին	հատ	4	3.62	19.72
10	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ20-Φ25, տեղադրումով	հատ	30	0.17	6.94
11	Խողովակների ռետինե ջերմամեկուսացում Φ25	մ	35.0	0.29	13.68
12	Խողովակների ռետինե ջերմամեկուսացում Φ20	մ	25.0	0.29	9.77
13	Ջեռուցման սարքերի մնտաժային կոմպլեկտ	հատ	5	1.70	11.56
14	Խողովակների ամրակապիչներ	հատ	60	0.11	9.25
15	Կախիչներ	հատ	10	0.11	1.54
16	Անցքերի բացում պատերում 150x150	տեղ	8	4.06	44.19
17	Մետաղական խողովակից պատյան Φ50 է=0.5մ (8հատ)	մ	4.0	1.87	10.17
<b>Ընդամենը 1-2 մասի</b>					<b>790.55</b>

**1-3. Ջեռուցման համակարգ 1\*-2\* առ.-ում ընկած հատվածում**

1	Այլումինե լավորակ ջեռուցման սարքեր տեղադրումով 0.129կՎտ H=0.5մ, ΔT=50 (80 սեկցիա)	էքմ	22.4	0.57	17.53
2	Այլումինե լավորակ մարտկոցների արժեքը	սեկցիա	80.0	4.49	489.30
3	Պոլիպրոպիլենե խողովակ այլումինե շերտով, տաք ջրի համար PN 20 Φ25 փորձարկումով	մ	35.0	2.27	108.01
4	Պոլիպրոպիլենե խողովակ այլումինե շերտով, տաք ջրի համար PN20 Φ20 փորձարկումով	մ	22.0	2.45	73.28
5	Ջեռուցիչների փական Φ15մմ, թերմոստատիկ գլխիկով	հատ	7	3.81	36.29
6	Ջեռուցիչների մոտ տեղադրվող կարգավորման փական Φ15մմ	հատ	7	3.78	35.99
7	Փական Φ20	հատ	3	3.78	15.43
8	Ջրի մաքրման ֆիլտր DN15	հատ	7	2.78	26.49
9	Կցորդիչով միացում առկա կանգնակին Φ25	հատ	8	3.62	39.44
10	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ20-Φ25, տեղադրումով	հատ	40	0.17	9.25
11	Խողովակների ռետինե ջերմամեկուսացում Φ25	մ	35.0	0.29	13.68
12	Խողովակների ռետինե ջերմամեկուսացում Φ20	մ	22.0	0.29	8.60
13	Ջեռուցման սարքերի մնտաժային կոմպլեկտ	հատ	7	1.70	16.19
14	Խողովակների ամրակապիչներ	հատ	57	0.11	8.79
15	Կախիչներ	հատ	14	0.11	2.16
16	Անցքերի բացում պատերում 150x150	տեղ	2	4.06	11.05
17	Մետաղական խողովակից պատյան Φ50 է=0.5մ (2հատ)	մ	1.0	2.14	2.92
<b>Ապամոնտաժման աշխատանքներ</b>					
1	Ջեռուցման սարքերի ապամոնտաժում մինչև 80 կգ	հատ	10.0	0.82	11.13
2	Մետաղապլաստե խողովակների ապամոնտաժում	մ	20.0	0.39	10.51

3	Պողպատե խողովակների ապամնտաժում	մ	15.0	0.39	7.88
	<i>Ընդամենը 1-3 մասի</i>				<b>943.91</b>
<b>1-4. Էլեկտրական լուսավորություն</b>					
<b>հատակագիծ-1</b>					
1	Ավտոմատ անջատիչ 220Վ,40Ա	հատ	4	4.18	22.76
2	Լուսատու առաստաղային, LED լամպով 220Վ, 25Վտ	լրակ.	35	6.17	293.91
3	Լուսատու պատի, LED լամպով 220Վ, 12Վտ	լրակ.	3	6.26	25.58
4	Լուսատու էվակուացիոն, LED լամպով, ներկառուցված մարտկոցով, «Ելք» նշանով, 220Վ, 18Վտ	լրակ.	2	10.57	28.80
5	Հաղորդալար պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, ՈՈՑԲ, հատվածքը 3x6մմ <sup>2</sup>	մ	50.0	0.50	34.03
6	Հաղորդալար պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, ՈՈՑԲ, 3x4մմ <sup>2</sup>	մ	190.0	0.42	108.42
7	Հաղորդալար պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, ՈՈՑԲ, հատվածքը 3x2,5մմ <sup>2</sup>	մ	380.0	0.34	177.39
8	Անջատիչ նորմալ տարբերակի, միատակ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	7	1.15	10.98
9	Անջատիչ նորմալ տարբերակի, երկտակ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	2	1.34	3.66
10	Երկբևեռ խրոցակային վարդակ, երրորդ հողանցման հպակով 220Վ, 10Ա	հատ	39	1.41	75.11
11	Տուփ անջատիչների, խրոցակային վարդակների տեղադրման համար	հատ	48	0.14	9.25
12	Ծյուղավորիչ տուփ	հատ	16	0.19	4.12
13	Երկաթակապ	100 հատ	14.0	1.13	21.58
14	Պատերի մեջ ակոսների բացում 20*20	մ	150.0	0.29	58.59
15	Ակոսների փակում	մ <sup>2</sup>	3.0	1.54	6.28
<i>Ապամոնտաժման աշխատանքներ</i>					
1	Լուսատուի ապամոնտաժում լամպով	հատ	35	0.96	45.98
2	Վարդակի և անջատիչների ապամոնտաժում	լրակ.	30	0.10	4.22
<b>հատակագիծ-2</b>					
1	Ավտոմատ անջատիչ 220Վ,40Ա	հատ	5	4.45	30.30
2	Լուսատու առաստաղային, LED լամպով 220Վ, 25Վտ	լրակ.	31	6.17	260.32
3	Լուսատու պատի, LED լամպով 220Վ, 12Վտ	լրակ.	1	6.26	8.53
4	Լուսատու էվակուացիոն, LED լամպով, ներկառուցված մարտկոցով, «Ելք» նշանով, 220Վ, 18Վտ	լրակ.	2	10.57	28.80
5	Հաղորդալար պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, ՈՈՑԲ, հատվածքը 3x6մմ <sup>2</sup>	մ	200.0	0.50	136.14
6	Հաղորդալար պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, ՈՈՑԲ, 3x4մմ <sup>2</sup>	մ	190.0	0.42	108.42
7	Հաղորդալար պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, ՈՈՑԲ, հատվածքը 3x2,5մմ <sup>2</sup>	մ	380.0	0.34	177.26
8	Անջատիչ նորմալ տարբերակի, միատակ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	10	1.34	18.26
9	Երկբևեռ խրոցակային վարդակ, երրորդ հողանցման հպակով 220Վ, 10Ա	հատ	49	1.42	94.44
10	Տուփ անջատիչների, խրոցակային վարդակների տեղադրման համար	հատ	59	0.14	11.37
11	Ծյուղավորիչ տուփ	հատ	16	0.19	4.12
12	Երկաթակապ	հատ	1400.0	0.01	21.58
13	Պատերի մեջ ակոսների բացում 20*20	մ	200.0	0.29	78.11

14	Ակոսների փակում	մ <sup>2</sup>	4.0	1.54	8.37
<b>Ապամոնտաժման աշխատանքներ</b>					
1	Լուսատուի ապամոնտաժում լամպով	հատ	30	0.96	39.38
2	Վարդակի և անջատիչների ապամոնտաժում	լրակ.	30	0.10	4.22
<b>Ընդամենը 1-4 մասի</b>					<b>1960.28</b>
<b>1-5. Հրդեհային ազդանշանում</b>					
<b>հատակագիծ-1</b>					
1	Հրդեհային ձեռքի ազդասարք	հատ	2	5.68	15.45
2	Ծխային տվիչ	հատ	16	5.79	126.01
3	Լուսածայնային ազդասարք	հատ	1	6.60	8.98
4	Մալուխ CV4U	մ	210.0	0.25	70.80
5	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական զոֆրե խողովակ Φ15, մոնտաժումով	մ	210.0	0.22	63.18
6	Երկաթակապ	հատ	500.0	0.01	7.70
7	500մմ հաստության պատի մեջ անցքերի բացում	տեղ	2	4.06	11.04
8	100մմ և 200մմ հաստության միջնորմի մեջ անցքի բացում	տեղ	8	4.06	44.16
9	Անցքերի փակում պատերում և միջնորմներում B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.10	166.82	22.70
10	Պատերի մեջ ակոսների բացում 40*20	մ	160.0	0.29	62.45
11	Ակոսների փակում	մ <sup>2</sup>	3.2	1.54	6.69
<b>հատակագիծ-2</b>					
1	8 մուտքանի հսկիչ պանել, LSD ստեղծաշարով	լրակ.	1	63.91	86.99
2	Ավտոմոմ սնուցման բլոկ 1.5կվտ, ակումուլյատորով 12Վ, 28Ա , տեղադրումով	հատ	1	37.55	51.10
3	Ծրագրային ապահովում իր մեջ ներառած համակարգի կարգաբերում, ծրագրավորում	հատ	1	200.00	272.20
4	Հրդեհային ձեռքի ազդասարք	հատ	2	5.68	15.45
5	Ծխային տվիչ	հատ	15	5.79	118.13
6	Լուսածայնային ազդասարք	հատ	1	6.60	8.98
7	Մալուխ CV4U	մ	130.0	0.25	43.83
8	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x1մ <sup>2</sup> BPբ	մ	2.0	0.42	1.15
9	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական զոֆրե խողովակ Φ15, մոնտաժումով	մ	130.0	0.22	39.11
10	Երկաթակապ	հատ	300.0	0.01	4.62
11	500մմ հաստության պատի մեջ անցքերի բացում	տեղ	1	4.06	5.52
12	100մմ և 200մմ հաստության միջնորմի մեջ անցքի բացում	տեղ	10	4.06	55.20
13	Անցքերի փակում պատերում և միջնորմներում B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.10	166.82	22.70
14	Պատերի մեջ ակոսների բացում 40*20	մ	100.0	0.29	39.03
15	Ակոսների փակում	մ <sup>2</sup>	2.0	1.54	4.18
<b>Ընդամենը 1-5 մասի</b>					<b>1207.36</b>
<b>1-6. Համակարգչային ցանց</b>					
<b>հատակագիծ-1</b>					
1	Կոմուտացիոն ղեկավարվող սարք (Switch layer 2) 2-րդ շերտի հասանելիության 24 հատ RG 45 ports autosensing 10/100/1000 Mbit/second արագություն ապահովող, (24port gigabit smart switch)	հատ	1	56.61	77.05
2	Համակցման վահանակ PATCH PANEL 24 xRG45 cat 5e ստանդարտի համակցիչների համար, 1U չափսի, 19'' ստանդարտի ISO/IEC 11801, անկյունային տիպի, 1000 Mbit/second արագություն ապահովող, DG+568A-B	հատ	1	17.74	24.14
3	Մալուխային կարգավորիչ (Cable Managment) հորիզոնական, փակ կափարհիչով	հատ	1	12.72	17.31

4	Ցանցային վարդակ (ամրացման կոմպլեկտով), 5e կատեգորիայի, 1000 Mbit/second արագություն ապահովող, լարանցման հորիզոնական շրիշակային սակառ կանալի մեջ, RJ45	հատ	8.0	3.83	41.69
5	Միակցիչ լար 2մ (Patch Cord)	հատ	16	3.53	76.83
6	Մալուխ, որը կապահովի 1000 Mbit/second արագություն UTP-5e, այրում չտարածող ծածկույթով	մ	250.0	0.27	91.30
7	Կոննեկտոր (connector RJ45 cat 5e) 1000 Mbit/second արագություն ապահովող, 5e կատեգորիայի	հատ	8	0.23	2.47
8	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ Փ15	մ	250.0	0.22	75.21
9	Երկաթակապ	հատ	600.0	0.01	9.24
10	Պատերի մեջ ակոսների բացում 40*20	մ	150.0	0.29	58.54
11	Ակոսների փակում	մ <sup>2</sup>	3.0	1.54	6.27
12	100մմ և 200մմ հաստության միջնորմի մեջ անցքի բացում	տեղ	8	4.06	44.16
13	Անցքերի փակում միջնորմներում B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.01	167.05	2.27
14	Միջհարկային ծածկերի մեջ անցքերի բացում	տեղ	3	0.44	1.81
15	Անցքերի փակում միջհարկային ծածկերի մեջ B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.007	217.70	1.96
16	Ծրագրային ապահովում իր մեջ ներառած համակարգի կարգաբերում, ծրագրավորում	հատ	1	200.00	272.20
<b>հատակագիծ-2</b>					
1	Կոմուտացիոն ղեկավարվող սարք (Switch layer 2) 2-րդ շերտի հասանելիության 24 հատ RG 45 ports autosensing 10/100/1000 Mbit/second արագություն ապահովող, (24port gigabit smart swich)	հատ	1	56.61	77.05
2	Համակցման վահանակ PATCH PANEL 24 xRG45 cat 5e ստանդարտի համակցիչների համար,1U չափսի,19`` ստանդարտի ISO/IEC 11801,անկյունային տիպի,1000 Mbit/second արագություն ապահովող,DG+568A-B	հատ	1	17.74	24.14
3	Մալուխային կարգավորիչ (Cable Managment) հորիզոնական, փակ կափարիչով	հատ	1	12.72	17.31
4	Ցանցային վարդակ (ամրացման կոմպլեկտով), 5e կատեգորիայի, 1000 Mbit/second արագություն ապահովող, լարանցման հորիզոնական շրիշակային սակառ կանալի մեջ, RJ45	հատ	9.0	3.83	46.90
5	Միակցիչ լար 2մ (Patch Cord)	հատ	18	3.53	86.43
6	Մալուխ, որը կապահովի 1000 Mbit/second արագություն UTP-5e, այրում չտարածող ծածկույթով	մ	250.0	0.27	91.30
7	Կոննեկտոր (connector RJ45 cat 5e) 1000 Mbit/second արագություն ապահովող, 5e կատեգորիայի	հատ	9	0.23	2.77
8	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ Փ15	մ	250.0	0.22	75.21
9	Երկաթակապ	հատ	600.0	0.01	9.24
10	Պատերի մեջ ակոսների բացում 40*20	մ	150.0	0.29	58.54
11	Ակոսների փակում	մ <sup>2</sup>	3.0	1.54	6.27
12	100մմ և 200մմ հաստության միջնորմի մեջ անցքի բացում	տեղ	8	4.06	44.16
13	Անցքերի փակում միջնորմներում B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.01	167.05	2.27
14	Միջհարկային ծածկերի մեջ անցքերի բացում	տեղ	3	0.44	1.81
15	Անցքերի փակում միջհարկային ծածկերի մեջ B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.007	217.70	1.96
16	Ծրագրային ապահովում իր մեջ ներառած համակարգի կարգաբերում, ծրագրավորում	հատ	1	200.00	272.20
<b>Ընդամենը 1-6 մասի</b>					<b>1620.03</b>

1-7. Հեռախոսային ցանց

հատակագիծ-1					
1	Միակցիչ լար 2մ (Patch Cord)	հատ	11	3.53	52.82
2	Հեռախոսային UTP վարդակ	հատ	11	3.11	46.59
3	Մալուխ UTP-5e	մ	220.0	0.27	80.34
4	Ելուղավորիչ տուփ մալուխների համակարգման համար	հատ	2	0.19	0.51
5	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ Փ15	մ	220.0	0.22	66.18
6	Պատերի մեջ ակոսների բացում 40*20	մ	150.0	0.29	58.54
7	Ակոսների փակում	մ <sup>2</sup>	3.0	1.54	6.27
8	Երկաթակապ	հատ	500.0	0.01	7.70
9	100մմ և 200մմ հաստության միջնորմի մեջ անցքի բացում	տեղ	8	4.06	44.16
10	Անցքերի փակում միջնորմներում B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.01	167.05	2.27
11	Ծրագրային ապահովում իր մեջ ներառած համակարգի կարգաբերում, ծրագրավորում	հատ	1	200.00	272.20
հատակագիծ-2					
1	Միակցիչ լար 2մ (Patch Cord)	հատ	13	3.53	62.42
2	Հեռախոսային UTP վարդակ	հատ	13	3.11	55.06
3	TV վարդակ	հատ	1	3.68	5.01
4	Մալուխ UTP-5e	մ	480.0	0.27	175.29
5	Մալուխ TV	մ	20.0	0.27	7.30
6	Ելուղավորիչ տուփ մալուխների համակարգման համար	հատ	2	0.19	0.51
7	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ Փ15	մ	500.0	0.22	150.42
8	Պատերի մեջ ակոսների բացում 40*20	մ	200.0	0.29	78.06
9	Ակոսների փակում	մ <sup>2</sup>	4.0	1.54	8.37
10	Երկաթակապ	հատ	1200.0	0.01	18.49
11	100մմ և 200մմ հաստության միջնորմի մեջ անցքի բացում	տեղ	8	4.06	44.16
12	Անցքերի փակում միջնորմներում B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.01	167.05	2.27
13	Ծրագրային ապահովում իր մեջ ներառած համակարգի կարգաբերում, ծրագրավորում	հատ	1	200.00	272.20
<b>Ընդամենը 1-7 մասի</b>					<b>1517.17</b>
<b>Ամբողջը</b>					<b>27276.83</b>
<b>ԱԱԳ - 20 %</b>					<b>5455.37</b>
<b>Ամբողջը</b>					<b>32732.20</b>

\* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան Արշակունյաց 7 հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե  
ք. Երևան, Արշակունյաց 7  
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն  
Հ/Հ 900013220026

Հ/Հ 02584328



Գլխավոր քարտուղար Ս. Գրիգորյան

(ստորագրություն)  
Վ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

« Դը Բեստ Շին» ՍՊԸ  
Գ. Գոռավան Վ. Սարգսյան 49  
Հ/հ 2472401738040000  
« ԱրդՇինԲանկ» ԲԲԸ  
ՀՎՀՀ 04230433



Տնօրեն Ա. Թադևոսյան

(ստորագրություն)

Վ.Տ.



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի								Ընդամենը	
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր		դեկտեմբեր
1	45461100/1	Ընթացիկ նորոգման աշխատանքներ	3000000	4500000	6000000	7500000	9000000	10500000	12000000	13500000	15000000	15000000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե  
 ք. Երևան, Արշակունյաց 7  
 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն  
 Հ/Հ 900013220026

ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար / Գրիգորյան



ԿԱՊԱԼԱՌՈՒ

« Դը Բեստ Շին» ՍՊԸ  
 Գ. Գոռավան Վ. Սարգսյան 49  
 Հ/հ 2472401738040000  
 « ԱրդՇինԲանկ» ԲԲԸ  
 ՀՎՀՀ 04230433

Տնօրեն՝ Ա. Թադևոսյան



Պայմանագրի կողմ  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

**ԱԿՏ N**

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
 Պատվիրատուի անունը  
 (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
 պայմանագրի կնքման ամսաթիվը

պայմանագրի համարը  
 գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման նպատակով  
 Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն